

## Այս համարում Հայերեն բաժին

1- Մենատիրության եւ միասնականության խառնաշփոթը մեր համայնքում.....	1
2- Լուրեր – Իրանահայ համայնք .....	2
3- Լուրեր – Հայաստան .....	3
4- Միջազգային.....	6
5- Հասարակական.....	7
6- Մշակույթ.....	10
7- Մարզական.....	10

Սյունակների սղության պատճառով  
Հրաչյա Աճառյանը Պարսկաստանում  
եւ Հայ հին գրականություն հոդվածների շարունակությունը  
կտպագրվի հաջորդ համարում

### Պարսկերեն բաժին

- 1- Հայոց մեծ Եղեռն.....1
- 2- Լուրեր-Իրան,Հայաստան,Միջազգային.....2

#### Ճապիկի առաջին էջում՝

Ծիծեռնակաբերդ

#### Ճապիկի վերջին էջում՝

Վարդգես Սուրենյան՝ Ուոնսհարված սրբություն  
1895, Հայաստանի մետական պատկերասրահ

Համար 141, Մարտ-Ապրիլ 2008թ.

No. 141, March-April 2008

ماہنامہ لويس - شماره ۱۴۱ اسفند ۱۳۸۶ - فروردین ۱۳۸۷

## Մենատիրության եւ միասնականության խառնաշփոթը մեր համայնքում

Արմինե Գալստյան

Իրանահայ համայնքում արդեն գրանցված փաստ է, որ դաշնակցությունը՝ վայելելով շահի հովանավորությունը, մենատերն է եղել համայնքի և դա պատճառ է դարձել համայնքում իրենց մենատիրական նորմերի ձևավորման: Իրանի Իսլամական հեղափոխությունից հետո առաջացավ դեմոկրատիկ պայմաններ և նրանք կորցրին այդ մենիշխանությունը և հարկավոր էր, որ սովորեին ապրել դեմոկրատական օրենքներով և փոխընթացմամբ մոտենային ուրիշ քաղաքական և հասարակական ուժերին և ոչ թե նրանց անտեսելու քաղաքականություն որդեգրեին, որը հակասում է միասնականությանը: Ներկայումս, երկար տարիներ անց, Պատգամավորական ժողովի անդամ ընտրվեցին ոչ դաշնակցական անձնավորություններ, հատկապես Սատուն և Ջեթուն քաղաքացիներ: Սա կատարվեց ժողովրդի ձայնով և կուսակցության կամքին հակառակ: Նրանք ստիպված էին իրենց տակտիկան փոխել կամ՝ զարգացած կուսակցությունների նման հաշվի պետք է նստել նրանց հետ, կամ էլ՝ ոչ զարգացած կուսակցությունների նման անտեսել և աշխատել չեզոքացնել նրանց: Դժբախտաբար, երկրորդ ձևը կիրառվեց նրանց կողմից:

Այսպիսով, անկախ նրանց կամքից, արդեն խախտվել է նրանց մենատիրությունը: Բողոքելով մենատիրության խախտման երևույթի դեմ արդեն սկսել են աղմկել, թե. «Մեր հակառակորդները խախտում են «միասնականությունը» և ոչ թե մենատիրությունը, և պարզորեն շփոթեցին կամ ուզում են ժողովրդին շփոթեցնել և համոզել, որ մենատիրությունը և միասնականությունը համահունչ երևույթներ են: Սա մենատերների հասկացողությունն է միասնականության մասին: Կուսակցության տեսաբաններից ոմանք ասում են, որ «Եթե մենք մենատեր լինեինք՝ Պատգամավորական ժողովում ոչ դաշնակցականներ չէին լինի», նրանց պետք է հիշեցնել, որ ոչ դաշնակցականներն ընտրվել են ժողովրդի ձայնով և ոչ թե դաշնակցության բարի կամքի դրսևորմամբ: Եթե իրենց ցանկում ընդգրկել են որոշ ոչ կուսակցականների, դրա պատճառն այն է եղել, որ այդ ոչ կուսակցականները ժողովրդի մոտ հեղինակություն են ունեցել, և կուսակցությունը նրանց հեղինակությունից ուզեցել է օգտվել իրենց համակիրների ձայները ապահովելու նպատակով:

Միասնականության հասկացողությունը տարբեր է մենատերների ու դեմոկրատների մոտ: Երբ իրենց մենատիրությունը խախտվում է, մենատերերը աղմկում են, որ իրենց հակառակորդները ազգային միասնականությունը խախտում են, սակայն իսկական միասնականությունը այն է, որ տարբեր գաղափարներով ուժեր միասնական եզրերի շուրջ համագործակցում են և ոչ մեկը մյուսին ենթակա կամ հնազանդ չէ, և յուրաքանչյուրը կարող է ազատորեն իր կարծիքն արտահայտի: Միասնականության ժամանակ հաշվի են առնվում և մեծամասնության և փոքրամասնության իրավունքները, ոչ ոք մյուսի դրոշի ներքո չի աշխատում: Մեր համայնքի կուսակցականների հասկացողությունը միասնականության մասին այս է. «Քանի, որ մենք մեծամասնություն ենք կազմում, ուրեմն իմ դրոշի ներքո պետք է միասնական լինել»:

Մենք առաջարկում ենք, որպեսզի մեր համայնքում էլ զարգացած մոտեցումներ ցուցաբերվեն այս երևույթների նկատմամբ, կազմակերպվեն երկխոսություններ և տարբեր հողվածների հրապարակումներ հայ մամուլում: Զարգացած մոտեցումներ ունենալու համար չես կարող նման հասկացողությունների կամ սահմանումների կողքից անցնել ու չանդրադառնալ, պետք է մտքերի բախումներ և այսպիսով շփումներ լինեն և տեսականորեն զարկ տրվեն այս երևույթներին: Հարցերին անդրադառնալով է, որ կարող ես ախտորոշում անել և բուժման ելքեր առաջարկել: Թողնենք բոլորը ազատորեն արտահայտվեն, նրանց շանտաժի չենթարկենք ու մատ թափ չտանք, ազատ արտահայտվողներին և ազգային կառույցից աշխատավարձ ստացողներին չվախեցնենք՝ ճնշում գործադրելով կամ որոշ



քաներից զրկելով, չզրկենք նրանց մտքերն ազատ արտահայտելուց:

## Լուրեր

### Իրանահայ Համայնք

#### Մշակութային Սեմինար

2008 թվականի մարտի 7-ին ԹՀԹ-ի Թեմական Խորհրդի նախաձեռնությամբ «Վաչե Յովսեփյան» սրահում տեղի ունեցավ մշակութային սեմինար, որտեղ ներկայացվեց 5 զեկույց, եղան հարց ու պատասխան և վերջում առիթ տրվեց ներկայներին, 6 թույլի սահմանում, հայտնեն իրենց տեսակետները: Սեմինարի նպատակն էր՝ ուսումնասիրել համայնքի մշակութային խնդիրները և ուսումնասիրության ենթարկել համայնքի մասշտաբով «մշակութային մարմին» կյանքի կոչելու անհրաժեշտության հարցը:

Սեմինարին հրավիրված էին բոլոր միությունների ներկայացուցիչները: Սկզբում ԹՀԹ-ի բարեխնամ Առաջնորդ Տ. Սեպուհ Արք. Սարգսյանը իր ողջույնի խոսքը ուղղեց ներկայներին և ասաց.- «Ներկայումս ոչ միայն հայ զաղուքն է տազնապում, այլ ընդհանրապես հայ աշխարհը: Ամեն տեղ մենք որոշ չափով տազնապի մեջ ենք. տազնապ որոնումի և տազնապ մի ելք գտնելու, որպեսզի կարողանանք հարազատորեն մեր ինքնուրույնությանը և ազգային պատկանելիությանը վայել ընթացքով ճամփա կամ ելք գտնենք: Այսօրվա հավաքույթը մեր մեջ զգացով տազնապի արդյունք է՝ տազնապ ընդհանրապես հոգևոր և մշակութային կյանքում: Տազնապում ենք, որովհետև ամեն օր նկատում ենք, որ մեր մշակույթը իր բազմակողմանի և բազմազան երևույթներով տազնապի մեջ է, նահանջի մեջ է: Նահանջում ենք լեզվով, հրատարակչական աշխատանքներում, նահանջում ենք մեր դպրոցներով, մեր գրական ասպարեզի մեջ, մեր երիտասարդական կյանքի մեջ և ամենից կարևորը մեր լեզվամտածողության մեջ, որը կարծես թե իր ուղղությունից շեղված է:

Մենք, հավանաբար, մտածում ենք, թե ի՞նչ կարելի է անել: Եթե մշակույթը որևէ ժողովրդի մտավոր և հոգևոր զգացմունքների արտահայտությունն է, ուրեմն այդ արտահայտության դրսևորումով ճանաչելու են այդ ազգին կամ ժողովրդին: Մենք ներկայումս մարտահրավեր ունենք ոչ միայն մշակութային կյանքի նկատմամբ, այլ նաև թե՛ մենք ի՞նչ ենք տալիս մեր նոր սերնդին, մեր պատանիներին ու երիտասարդությանը: Ինչ ունենք փոխանցելու իրենց, որպես ազգ և որպես համայնք՝ ի՞նչ ունենք ներկայացնելու իրենց լեզվով, որ ասենք՝ սա է քո մշակույթը, վերցրու և կարդա: Այսօր ուր է Ավետարանը և եկեղեցին մեր կյանքում: Այսօր մենք այս զաղուքում որոշ մշակութային աշխատանքներ տանում ենք միությունների միջոցով և որոշ չափով ազգային իշխանության միջոցով, ունենք օրաթերթ, պարբերաթերթեր ու գրական թերթ: Ի՞նչ չափով է այսօրվա մամուլը արտացոլում մեր կյանքը, սա էլ հարցական է»:

Այնուհետև ելույթ ունեցավ ԹՀԹ-ի Թեմական Խորհրդի նախագահ՝ դկտ. Այիդա Յովհաննիսյանը և իր խոսքերում ասաց.- «Թեմական Խորհուրդը զբաղվում է համայնքի տարբեր աշխատանքներով, տարբեր պարտականություններով և նրանց կողքին չի կարող անտարբեր լինել համայնքի մշակութային կյանքի հարցերին: Թեմական Խորհուրդը մշակութային աշխատանքները տեսնում է մշակութային միություններում, որոնք կոչված են մեր մշակույթը պահելու և զարգացնելու: ԹՀԹ-ի կանոնագրության մեջ նախատեսված է, որ ունենա մշակութային մարմին, մի երկու շրջան դա կյանքի կոչվեց և բավականին մշակութային աշխատանք տարվեց, բայց ընդհանրապես այդ աշխատանքը չչարունակվեց, ես դրա պատճառներին չեմ անդրադառնում, այլ նշում եմ որպես մի երևույթ... Երևի այս սեմինարում Ձեր տված խորհուրդների և ուղղությունների հիման վրա ԹԽ-ն կը կարողանա ճիշտ կողմնորոշվի: Անկախ նրանից, թե մենք մշակութային մարմին

ունենք, թե՛ չունենք, ԹԽ-ն չի կարող անտարբեր լինել համայնքի մշակութային հարցերի նկատմամբ: Գոնե պետք է պահվի այն մշակութային մակարդակը, որը ունի համայնքը: Վերջին տարիների ընթացքում մեր մշակութային կյանքը նահանջ է արձանագրել, հատկապես երիտասարդության մոտ հայոց լեզվի բնագավառում: Յուրաքանչյուր ազգի մշակութային կարևոր գործոնը հենց լեզուն է: Մենք ունենք ավելի շատ սպառողական մշակույթ քան ստեղծագործական: Այստեղ մեծ դեր է կատարում դպրոցը, դպրոցները դժվարանում են հավելյալ ժամեր տրամադրել լեզվի հարցին: Այստեղ պիտի գտնել մի ելք, որ դպրոցը կարողանա ծառայել մշակույթին առանց նրան, որ իջնի ուսուցման և կրթության մակարդակը, որովհետև վերջին հաշվով դպրոցի առաջին պարտականությունը աշակերտներին ուսուցանելն է, բայց հայոց դպրոցի պարտականություններից է նաև հայ աշակերտին տալ հայ մարդու դաստիարակություն: Այս սեմինարի եզրակացությունների հիման վրա հույս ունեն, որ մեր մշակութային միությունները կը կարողանան իրենց ուղղությունը ճշտեն և ճշտվի այն դերը, որ մշակութային մարմինը կարող է ունենալ մեր համայնքում»:

Հետո խոսք տրվեց զեկույցաբերներին: Եղած հինգ զեկույցներից որոշակի մասեր այսուհետ հերթաբար կներկայացնենք մեր ընթերցողների ուշադրությանը:

ՅՅԵ 1

#### 300 միլիոն թումանի ձակատագիրը պարզ չէ

Արդեն երեք տարի է, որ Իրանի Իսլամական Խորհրդարանը Իրանի կրոնական փոքրամասնությունների համար հատուկ բյուջե է հատկացնում, որը բաժանվել է ԻԻՀ Խորհրդարանի Զայ պատգամավորի և Թեմական Խորհրդի միջոցով: Իրանական տարեվճիվ 1384-ին կատարված հատկացումից 300 միլիոն թուման հատկացվել էր ազգային հայկական դպրոցների վերանորոգման համար, սակայն այդ կապակցությամբ քանի անգամ որոշ պատգամավորների կողմից հարց է բարձրացվել, թե ինչու՞ այդ գումարի մուտքագրումը Թեմական Խորհրդի կողմից ներկայացված նյութական հաշվետվության մեջ պարզ չի երևում, արդյոք դա մուտքագրվել է որոշ դպրոցների բյուջեի մեջ, թե՞ առանձին հաշվում: Լավ կլինի այս հարցի կապակցությամբ պարզաբանումներ մտցնի մեր հարգելի Թեմական Խորհուրդը, որպեսզի անտեղի կասկածների տեղիք չտա:

#### Համայնքի բյուջեից «Ալիք»-ին տրված պարտքը դեռ չի վերադարձվել

Մոտ 7-8 տարի առաջ ժամանակի Թեմական Խորհուրդը «Ալիք» օրաթերթի շենքի կառուցման համար ազգային բյուջեից 90 միլիոն թուման պարտք տվեց «Ալիք» օրաթերթին՝ իր շենքի կառուցման համար, որը պետք է վերադառնվեր ազգային բյուջե, սակայն մինչ այժմ ոչ մի խոսք չի եղել դրա վերադարձման շուրջ: Հույսով ենք այս հարցի վրա ուշադրություն կդարձնի ներկայիս Թեմական Խորհուրդը և մոռացության չի տա:

#### Գարնանային բանակում «Բանդար Անգալի»-ում

ՀՄՍ «Ռաֆֆի» համալիրի սկաուտական բաժանմունքը իր գարնանային բանակումը բանակումը անցկացրեց «Բանդար Անգալի»-ի ազգային ճամբարում, որին մասնակցում էին ավելի քան 80 սկաուտ: Գամբարը սկսվեց 2008 թվականի մարտի 18-ին և ավարտվեց մարտի 22-ին: Բանակումի ընդհանուր պատասխանատուն էր՝ համալիրի սկաուտապետ ընկեր Սևան



Սահակյանը: Համալիրի սկաուտական բաժանմունքի ծնողական խորհուրդը իր ակտիվ մասնակցությունն էր բերել ծնողական խորհրդի նախագահ պրն. Հրայր Աբգալյանի և պրն. Խեչո Նազարյանի գլխավորությամբ:

Բանակումի ընթացքում տարբեր հատվածներ իրականացրեցին իրենց նախորդ պատրաստված ծրագրերը: Ձատկվա առթիվ, որպես ձեռքի աշխատանք, գայլիկ-արծվիկների հատվածը պատրաստել էր գունավոր հավիկներ: Բոլոր սկաուտները այցելեցին Բանդար Անգալիի Ս. Աստվածածին եկեղեցի:

Լավագույն սկաուտներին, բանակումի հանձնախմբին և ծնողական խորհրդի անդամներին տրվեց համապատասխան գնահատագրեր:

Բանակումի ամենակտրսեր սկաուտներն էին արծվիկներ Գալիա և Ադենա Դարաբեդյանները, որոնք առաջին անգամ էին մասնակցում ընդհանուր բանակումի և լավ կարողացան համակերպվել պայմաններին:

## ԻՆԸ Խորհրդարանի (Թեհրանի եւ հյուսիսային իրանահայության) հայ պատգամավորի ընտրություն

2008 թվականի մարտի 14-ին տեղի ունեցավ Իրանի Իսլամական Հանրապետության (Թեհրանի և հյուսիսային իրանահայության) հայ պատգամավորի ընտրությունը, որում պայքարի էին դուրս եկել երեք թեկնածուներ՝ 1- ՀՀ Դաշնակցության թեկնածու Գևորգ Վարդանյան, 2- Անկախ թեկնածու Հարութ Քեչիշյանը և 3- Ինքնաառաջադրված թեկնածու Վարդան Վարդանյանը:

Անհավասար պայմաններում նրանք մրցեցին և արդյունքում ընտրվեց Գևորգ Վարդանյան: Յուրաքանչյուր ընտրություն դաս է լինում կողմերի համար՝ ապագայում ավելի լավ մասնակցելու նպատակով:

Քանի որ դաշնակցությունը անցյալ ռեժիմի՝ շահի օրոք, իրեն տրամադրված հնարավորությունների հետևանքով իշխում է մեր համայնքի ազգային հաստատությունների վրա, չկարողացավ որպես ազգային մարմին իր բարձրունքի վրա գտնվել և չը չարաշահել իրեն վստահված ազգային հաստատությունները: Նա ամեն կերպ օգտագործեց դա՝ իր թեկնածուի համար ձայներ շահելու նպատակով: Այս կապակցությամբ միայն կներկայացնենք քանի փաստեր և դատողություններ կթողնենք մեր ընթերցողներին:

1- Ազգային դպրոցների բոլոր հնարավորություններից օգտվեց միայն Գևորգ Վարդանյան գովազդելու համար, անգամ բաժնախոսով աշակերտությանը անգամներ հայտարարվեց «ծնողներին ասեք Գևորգին ձայն տան» հայտարարությունը:

2- Առօրյա աշխատանքը չդադարեցնելով՝ ազգային «Ավետիսյան» բուժարանը առանց արձակուրդի դարձվեց քվեարկության կենտրոն և նախորդ կազմակերպված ձևով իրենց մարդկանց միջոցով տարիքավորների փոխարեն իրենք էին լրացնում ու գրում Գևորգի անունը թերթիկում:

3- Կուսակցության երիտասարդական ճյուղի՝ «Ռոստոմ երիտասարդական Միության» բոլոր անդամներին կենտրոնացնելով «Սասուն» և «Ջեթուն» քաղաքամասերում ամեն կերպ ազդում էին քվեարկողների վրա և միջամտություններ անում, անգամ քանի տեղ՝ թեկնածու Հարութ Քեչիշյանի դիտորդների կողմից բացահայտվել և բողոք է ներկայացվել, բայց լարվածություն չստեղծելու համար կարճ էին եկել:

4- Նորաստեղծ «31 ատամ...» թատերախմբին ցեխի քաշելով և գռեհիկ պահանջներ առաջադրելով իրանահային ոչ վայել ձևերով ներկայացնելով ընդդիմադիրներին, ուզեցել էին ազդել ընտրողների վրա և, դժբախտաբար, նորամասնակ թատրոն խաղացողները ընկել էին այդ ծուղակը և չգիտեն, թե ինչ է գալու իրենց գլխին ապագայում: Նրանք ամեն կերպ արժեքազրկեցին իրանահայ թատրոնը և արժեքազրկվեցին ժողովրդի մոտ: Ավելի լավ կլիներ նրանց առջև դաշնակցությունը քաղաքական պատվեր չդնել, որովհետև հենց նրանք վաղը թեքվելու են իրենց դեմ: Պրն. Սեթոն շատ երևակայությունների մեջ չի կարող լինել: «Լույս» ամսագիրը

կաշխատի ներկայացնել պրն. Սեթոյի տեսակետները, որոնք նա հնչեցրել է մշակութային սեմինարի ժամանակ, և թող ժողովուրդը դատի մտքի և գործի միջև ահռելի տարբերության մասին:

5- Դիտորդների քանակի անհամեմատելի տարբերություն կար, եղած 10 դիտորդներից ու քարտուղարներից միայն երկուսն էին ներկայացնում թեկնածու Հարութ Քեչիշյանին և մնացածը կուսակցության մարդիկ էին: Այդ անհավասար դիտորդական խմբում ամեն կերպ աշխատում էին կեղծել և ազդել ընտրողների վրա:

6- Թեկնածու Հարութ Քեչիշյանի դիտորդներին իրավունք չէին տրվել իրենց թաղերի ընտրական կենտրոններում լինել և նրանց ցրել էին տարբեր թաղեր, ինչը չէր կատարվել Գևորգ Վարդանյանի դիտորդների նկատմամբ:

Ոչ դաշնակցական թեկնածու Հարութ Քեչիշյանը իր բոլոր ջանքերը ներդրեց սակայն 17 տոկոս շահելով չկարողացավ նույնիսկ անցյալի ձեռք բերած քվեների քանակը՝ 25-30 տոկոսը, պահպանել: Դրա պատճառները բազմազան են, որոնցից կարելի է թվարկել միայն հետևյալները՝

1- Անցյալ երկու տասնամյակում թեկնածուի ոչ բավարար ակտիվ լինելը թեհրանահայ համայնքում: Իհարկե նա ակտիվացել է շուրջ մեկ ու կես տարի առաջ, երբ նա ընտրվեց որպես Միասնական Համադրող Հանձնախմբի նախագահ և քանի տարի առաջ Թեմական Խորհրդի անդամ և ներկայումս ԹՀԹ-ի Պատգամավորական Ժողովի անդամ, սակայն այդ բնագավառներում ևս բավարար ակտիվություն չի եղել:

2- Թեկնածուն լավածանոթ չէր թեհրանահայության մեծամասնության շրջանում: Իր թաղում նույնիսկ բավարար ծանոթություն դեռևս գոյություն չուներ:

3- Ուրմիայում, Արաքում, Սարիում և Գորգանում որևէ աշխատանք չտանելը, անծանոթ լինելը նույնպես դերակատարություն ուներ:

4- Թեհրանում, բացի «Սասուն» և «Ջեթուն» քաղաքամասերից, մյուս թաղերին կարևորություն չէր տրվել: Յուրաքանչյուր թեկնածու Թեհրանի բոլոր թաղերում և Թեհրանից դուրս, շրջաններում նույնպես, պետք է աշխատեր և դա պետք է կատարվեր ամիսներ առաջ և ոչ թե միայն ընտրությունների մեկ շաբաթվա ժամկետում:

Այս բոլորը պետք է դասեր լինեն ոչ դաշնակցական խավերի համար, որպեսզի այսուհետ իրականությունների հետ հաշվի նստելով լուծեն հասարակական հարցերը:

Երրորդ թեկնածուն պրն. Վարդան Վարդանյանը, «Սասուն» քաղաքամասում տարիների հասարակական, դաշնակցական և ազգային գործիչ է եղել: Նա մեծ ջանքեր է ներդրել «Սիփան» ՄՄ միության սահմաններում ու կուսակցության սահմաններում երիտասարդների դաստիարակման գործում: Նա եղել է «Ռոստոմ» երիտասարդական Միության (ՌԵՄ) պատասխանատուն: Իր ջանքերն է ներդրել նաև Հայաստանում, սակայն, դժբախտաբար, իր վերլուծությունների հիման վրա հուսախափվել է կուսակցությունից և մտածում է, որ կուսակցությունը այլևս կորցրել է իր առաքելությունը և պետք է բարեփոխման ենթարկվի: Նա որևէ պրոպագանդա չէր տարել և շահեց ձայների շուրջ 4 տոկոսը:

## ԼՂԸ ՆԱԽԱԳԱՆ ԸՄԴՈՒՆԵԼ Է

28-03-2008

Մարտի 28-ին ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանն ընդունել է Հայ Առաքելական եկեղեցու Թեհրանի թեմի առաջնորդ Սեպուհ արքեպիսկոպոս Սարգսյանին, Ատրպատականի թեմի առաջնորդ Նշան եպիսկոպոս Թովմազյանին, Նոր Ջուղայի թեմի առաջնորդ Բաբկեն եպիսկոպոս Չալսյանին: Հանդիպմանը, որին մասնակցում էր Արցախի թեմի առաջնորդ Պարգե արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, քննարկվել են իրանահայ համայնքի հետ կապերի հետագա ընդլայնման ու խորացման, Լեռնային Դարաբաղում ներդրումային ծրագրերի իրականացման հեռանկարների, ինչպես նաև պետություն-եկեղեցի հարաբերություններին վերաբերող մի շարք հարցեր:

# Հայաստան

## ՅՈՒՆԵՍԿՕ-Ն ԿՆՁԻ ԿԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԻ ԵՎ ԿԻԿՏՈՐ ՐԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿՆԵՐԸ

«ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՇՐՈՂԱՐԱՎՈՒՄ ԻՄԱՅԵԼԻ ԴՐՈՁԸ ԾԱԾԱՆԵԼԸ ԸՆԴԴԱՏՅԱ ԳՈՐԾ Է»


### Ասում է Հայաստանի հրեական համայնքի ղեկավարը



Նախընտրական եւ հետընտրական հանրահավաքներում օտար պետության դրոշ ծածանվել էր միայն նախագահի թեկնածու Արթուր Բաղդասարյանի հրավիրած հանրահավաքներից մեկում, բայց ոչ առանձին պետության, այլ եվրոմիության դրոշը: Ազատության հրապարակում յոթ օր ու գիշեր հանրահավաք անող Լեւոն Տեր-Պետրոսյանն ու նրա աջակիցները փետրվարի 27-ին իրենց ցնծությունը արտահայտեցին Իսրայելի պետական 2 դրոշներով հաղթականորեն պահված հարթակից քիչ հեռու կանգնածների ձեռքերում: Այդ դրոշների ֆոնի վրա ազգային ու ժամանակակից պարեր պարող Լեւոն Տեր-Պետրոսյանին Համայնքի հեռուստատեսությամբ նախորդ օրը դիտած մարդկանց համար եթե ոչ անհասկանալի, զոնե անսպասելի էին այդ երկրի պետական դրոշն ի ցույց ամենքի հանելու քաղաքական նրբերանգները: Այդօրինակ քաղաքական «միացում» կարող էր տեղի ունենալ միայն այն դեպքում, եթե հանրահավաքում ներկա գտնվեին իրենց երկրի խորհրդանիշն իրենց հետ բերած իսրայելցիները կամ մեր երկրի հրեական համայնքի անդամները: Վերջիններս, ինչպես «Ազգի» հետ հեռախոսազրույցում ասաց Հայաստանի հրեական համայնքի ղեկավար Ռիմա Վարժապետյանը, չեն մասնակցում Լեւոն Տեր-Պետրոսյանի աջակիցների հանրահավաքին: Մնում է ենթադրել, որ կամ լեւոնական թեւի հարազատներն են ժամանել Իսրայելից, կամ որոշ մասնակիցներ իրենց արդեն իսկ համարում են իսրայելցիներ:

«Իսրայելի դրոշը հանրահավաք տանելու հետ մենք ոչ մի կապ չունենք, ուղղակի ապշահար ենք այդ արարքից: Դա ընդդատյա գործ է, ո՞վ է իրեն իրավունք վերապահել մեկ այլ պետության դրոշի ներքո հանրահավաք անել: Մենք այստեղ Հայաստանի քաղաքացիներ ենք, ես չգիտեմ դա ո՞ւմ կազմակերպած սարճանքն է: Մեզ իրոք շատ է հետաքրքրում, թե ո՞վ է կանգնած դրա հետեւում: Մեր համայնքի անդամները չեն գնում Ազատության հրապարակ, մենք ոչ մի կապ չունենք ո՛չ ընդդիմության, ո՛չ էլ նրանց հանրահավաքների հետ», ասաց Ռիմա Վարժապետյանը, բացառելով, որ այդպիսի անմիտ արարք կարող էր իրեն թույլ տալ Հայաստանի առաջին նախագահի ազգությամբ հրեա կինը՝ Լյուդմիլա Տեր-Պետրոսյանը:

Հայաստանի հրեական համայնքը, ինչպես նշեց համայնքի ղեկավարը, երեկ շնորհավորական հեռագիր է ուղարկել նախագահ ընտրված Սերժ Սարգսյանին: «Մեզ համար նա է երկրի ղեկավարը, նրան ուղարկած հեռագիրը տեղադրել ենք մեր ինտերնետային էջում: Այս ընտրություններում աջակցել ենք նրան՝ գնահատելով վերջին տարիներին Հայաստանի զարգացման համար նրա ունեցած ներդրումը»:



ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հովանավորվող՝ հռչակավոր մարդկանց եւ կարեւոր իրադարձությունների տարեդարձներին նվիրված միջոցառումների շարքում 2008-2009 թթ. համար ընդգրկված են հայ անվանի գրող Կիլյան Սարոյանի եւ աստղաֆիզիկոս Կիկտոր Համբարձումյանի ծննդյան 100-ամյակի տոնակատարությունները: Վ. Սարոյանի հոբելյանին նվիրված միջոցառումներ կանցկացվեն Հայաստանում եւ ԱՄՆ-ում, մասնավորապես՝ Ֆրեզնոյում, որտեղ ապրել եւ ստեղծագործել է մեծանուն գրողը: Հաղորդվում է, որ Հայաստանը շարունակելու է մշակութային դիվանագիտությունը, որի շնորհիվ նախորդ տարի հաջողությամբ մի շարք միջոցառումներ են իրականացվել այլ երկրներում Հայաստանի դարավոր մշակույթն ու հոգեւոր կյանքն ըստ արժանվույն ներկայացնելու ուղղությամբ: Նախորդ տարի ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջոցառումների շարքում ընդգրկված են եղել հայտնի նկարիչ Գառզուի (Գառնիկ Ջուլյունյան) եւ ականավոր գիտնական Նորայր Սիսակյանի ծննդյան 100-ամյակի տոնակատարությունները:

**«Համաշխարհային Հայկական Կոնգրես»**  
 «Համաշխարհային Հայկական Կոնգրեսի» «Հայերն Այսօր» լրատվական-վերլուծական տեղեկագրի նպատակը Հայաստան-Սփյուռք եւ Սփյուռք-Սփյուռք կապերի ամրապնդումը եւ համահայկական ընդհանուր տեղեկատվական դաշտի զարգացումն է: Տեղեկագիրը տարածվում է հայերեն, անգլերեն, ռուսերեն լեզուներով մոտ 30.000 էլեկտրոնային հասցեներով աշխարհի շուրջ 50 երկրներում եւ շարունակում է ընդլայնել իր տարածման եւ լրահավաքի աշխարհագրությունը: Տեղեկագիրը տարածվում է բացառապես **ԱՆՎՃԱՐ՝** շնորհիվ **«Համաշխարհային Հայկական Կոնգրեսի»** ֆինանսավորման: «Համաշխարհային Հայկական Կոնգրեսի» «Հայերն Այսօր» լրատվական-վերլուծական տեղեկագիրը պատրաստում է «Նոյան Տապան» լրատվական Կենտրոնը Լրատվամիջոցների Համահայկական Ընկերակցության մասնակցությամբ:  
**Հասցե՝** Հայաստան, Երեւան, Իսահակյան 28  
**Հեռախոս՝** (37410) 565965  
**Ֆաքս՝** (37410) 524318  
**Էլ. փոստ՝** [armenianstoday@nt.am](mailto:armenianstoday@nt.am)  
**Լրահավաք՝** [mediaforum@nt.am](mailto:mediaforum@nt.am)  
**Ինտերնետային Կայք՝** [www.mediaforum.am](http://www.mediaforum.am)  
**Եթե չեք ցանկանում ստանալ Տեղեկագիրը, գրեք մեզ հետեւյալ էլ. հասցեով՝** [armenianstoday@nt.am](mailto:armenianstoday@nt.am)

**ՀՀԿ-ի Երիտ. կազմակերպությունը արդեն սկսել է իր աշխատանքները**  
 Այսօրվա ճակատամարտի հույսերով ու սպասելիքներով, ակնկալություններով ու հավատով լի հայ երիտասարդությունը մեր ժողովրդի վաղվա օրվա մեծագույն ուժն է: Ավելի քան համոզված են, որ մեր երիտասարդությունը Համաշխարհային

հայկական կոնգրեսի կազմում, մասնակցելով համազգային խնդիրների լուծմանը, կարևոր շատ հարցեր է վճռելու:

**Արա Աբրամյան  
Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ  
Մեկնարկ**

Աջակցությունը աշխարհասփյուռ հայերի ջանքերի համախմբմանը համազգային շահերի շուրջը Համաշխարհային Հայկական Կոնգրեսի (ՀԿԿ) ամենակարևոր նպատակն է, որ յուրաքանչյուր հայի, առավել ևս ապագան տնօրինելու տրամադրված հայ երիտասարդի համար որևէ կերպ ընդհանուր գործին նպաստելու ցանկություն է առաջ բերում:

ՀԿԿ-ն ապագայի կազմակերպություն է, նրա նպատակների իրագործումը երկարատև ու հետևողական աշխատանք է պահանջում: Այդ էր պատճառը, որ Կոնգրեսը սկսեց իր գործունեությանը մասնակից դարձնել ՀԿԿ խնդիրներին համահունչ նպատակներ ունեցող երիտասարդական կառույցներին: 2006թ. մայիսի 15-ին ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայում Համաշխարհային Հայկական Կոնգրեսի նախագահ Արա Աբրամյանն ընդունեց երիտասարդական 10 կազմակերպությունների ներկայացուցիչներին:

Այդ հանդիպման արդյունքում հայկական մի շարք երիտասարդական կազմակերպություններ անդամագրվեցին Համաշխարհային հայկական կոնգրեսին: Արա Աբրամյանի հետ քննարկած մտահոգություններն ու առաջարկներն էլ ծնունդ տվեցին որպես ՀԿԿ կառուցվածքային ստորաբաժանում հայկական երիտասարդական կազմակերպությունների միավորման գաղափարին: Ձևավորվեց նախաձեռնող խումբ, և գաղափարի իրագործումը երկար սպասեցնել չտվեց:

Երիտասարդական կազմակերպությունների ասոցիացիան՝ իրականություն 2006թ. սեպտեմբերի 17-ին տեղի ունեցավ հայկական երիտասարդական մի շարք կազմակերպությունների ներկայացուցիչների ժողով, որտեղ որոշվեց ձևավորել Համաշխարհային հայկական կոնգրեսի երիտասարդական կազմակերպությունների ասոցիացիան (ՀԿԿ ԵԿԿ): Այն միավորեց ավելի քան հինգ հազար երիտասարդ ներկայացնող 10 երիտասարդական կազմակերպություններ՝ հինգ երկրներից:

Ներկայացուցիչների ժողովում ձևավորվեց խորհուրդ, որը բաղկացած է 11 անդամից: Խորհրդի նախագահ ընտրվեց Ատոմ Մխիթարյանը, տեղակալներ՝ Մարիամ Մարտիրոսյանը, Արմեն Շահբազյանը, պատասխանատու քարտուղար՝ Արմեն Սմբաթյանը:

Ասոցիացիայի նպատակներից ու խնդիրներից են...

նպաստել ՀԿԿ նպատակների և խնդիրների իրականացմանը երիտասարդական կազմակերպությունների ակտիվ մասնակցության ապահովմանը, կապեր հաստատել և համագործակցել Հայաստանի, Արցախի, Սփյուռքի, արտերկրի այլ երիտասարդական կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային կառույցների հետ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերի համատեղ քննարկման և լուծման նպատակով, օժանդակել մարդու իրավունքների, մասնավորապես, հայ երիտասարդների իրավունքների ու շահերի պաշտպանությանը, զորավիզ լինել ազգային ավանդույթների և սովորությունների վերականգմանը, պահպանմանն ու տարածմանը, միավորել հայ երիտասարդությանը հայրենասիրության, ազատության և ժողովրդավարության գաղափարների շուրջը, աջակցել հայ երիտասարդության մտավոր, հոգևոր և ֆիզիկական զարգացմանը, սոցիալական խնդիրների լուծմանը, նպաստել աշխարհի տարբեր երկրներում գործող հայկական երիտասարդական կազմակերպությունների փոխօգնությանն ու փոխգործակցությանը, մասնակցել ազգային և միջազգային երիտասարդական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը և այլն:

**Ն. Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց  
կաթողիկոսն ուղերձ է հղել Երեւանում մարտի 1-ի  
իրադարձությունների առթիվ**

ԷՋՄԻՍԾԻՆ, 3 ՄԱՐՏԻ, ԱՐՄԵՆԴՐԵՍ: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսն ուղերձ է հղել Երեւանում մարտի 1-ի իրադարձությունների առթիվ: Ինչպես «Արմենպրես»-ին

հայտնեցին Մայր Աթոռի մամլո դիվանից, ուղերձում ասված է.

«Սիրելի բարեպաշտ ժողովուրդ հայոց. վիշտն է այսօր համակել ամենքիս հոգիները: Ազգս հայոց սգուն է կորուստը իր զոհված զավակների: Նախագահական ընտրապայքարում դրսևորված անհանդուրժողության ոգին հանգեցրեց անկարգությունների, ցավալի և ողբերգական բախումների ու առճակատման: Երբեք չէինք սպասի, որ բնական ողջախոհությունը մեր ժողովրդի պիտի տեղի տար ատելության և թշնամանքի առջև: Այսօր, սիրելիներ, մտահոգ և անհանգիստ է համայն մեր ժողովուրդը՝ վտանգված տեսնելով իր նվիրական արժեքները՝ ազգի միաբանությունը, Հայրենիքի խաղաղությունն ու ապահովությունը»:

Ամենայն Հայոց կաթողիկոսը կոչ է արել ցուցաբերել ողջամտություն, հեռու մնալ եղբայրասպանության զգացումներից, տազնապար խորացնող քայլերից, հուզող բոլոր հարցերն ու խնդիրները վճռել խաղաղությամբ, օրինահարգությամբ, երկխոսության ապահով ուղիներով:

«Պատմության ու սերունդների առջև պատասխանատու ենք յուրաքանչյուրս: Չլինի, որ անխոհեմ հետագա քայլերով վտանգենք մեր երկրի կայունությունը: Չլինի, որ մթազանծ տեսնենք մեր Հայրենիքի նորաբաց արելը: Չմնանք պարտական Աստուծո, մեր հայրերի ու զավակների առջև: Հավատում ենք, որ ապավինությամբ առ Աստված, արիության ոգով, հույսով ու լավատեսությամբ պիտի հաղթահարենք ստեղծված ծանր ու դժվարին իրավիճակը, վերագտնենք մեր կյանքի, մեր Հայրենիքի բարոր ընթացքը:

Աղոթք ենք բարձրացնում երկինք հոգիների համար զոհված մեր զավակների և մխիթարություն հայցում նրանց սգակիր ընտանիքներին և հարազատներին»,-ասված է ուղերձում:

**Երեւանում զանգվածային  
անկարգությունների մասնակիցները հրկիզել  
են 36 տրանսպորտային միջոց**

ԵՐԵՎԱՆ, 3 ՄԱՐՏԻ, ԱՐՄԵՆԴՐԵՍ: Երեւանում մարտի 1-ի լույս 2-ի գիշերը տեղի ունեցած զանգվածային անկարգությունների մասնակիցները հրկիզել են ընդհանուր առմամբ 36 տրանսպորտային միջոց:

ՀՀ զլխավոր դատախազի մամուլի քարտուղար Սոնա Տոուզյանն «Արմենպրես»-ին տեղեկացրեց, որ ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվել է, որ հրկիզվել է ոստիկանության 13 ավտոմեքենա, 3 ավտոբուս, մասնավոր սեփականություն հանդիսացող 13 ավտոմեքենա, հասարակական տրանսպորտի միջոցներից 3 տրոլեյբուս և 4 ավտոբուս: Ձանգվածային անկարգությունների հետեւանքով պետության և մասնավոր գույքին պատճառված վնասների չափերը ճշտվում են:

**Սահմանադրական դատարանն ուժի մեջ թողեց  
«Հանրապետության նախագահ ընտրվելու  
մասին» ՀՀ ԿԸԸ թիվ 24-Ա որոշումը**

ԵՐԵՎԱՆ, 10 ՄԱՐՏԻ, ԱՐՄԵՆԴՐԵՍ: ՀՀ Սահմանադրական դատարանն այսօր հրապարակեց ՀՀ նախագահի փետրվարի 19-ին կայացած ընտրությունների արդյունքները վիճարկելու մասին գործի քննության որոշումը:

Այսպիսով, այն ուժի մեջ թողեց «Հանրապետության նախագահ ընտրվելու մասին» ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2008 թ. փետրվարի 24-ի թիվ 24-Ա որոշումը: Դատարանը որոշեց նաև թիվ 01/28, 08/27, 17/02, 20/18, 23/41, 33/04, 33/21, 33/22, 37/03, 37/11, 37/44 տեղամասային ընտրական հանձնաժողովների ամփոփիչ արձանագրություններում փոփոխությունների, թիվ 30, 31 և 38 ԸԸՀ-ներում վերահաշվարկ կատարելը մերժելու վերաբերյալ որոշումների, ինչպես նաև դիմամատուցների կողմից ներկայացված քվեաթերթիկների, քվեարկության ծրարների և տեսանյութերով ներկայացված փաստերի իրավագնահատման և օրինականությունը պարզելու նպատակով դրանք տրամադրել ՀՀ դատախազությանը՝ օրենքով սահմանված կարգով ընթացք տալու համար: Հիշեցնենք, որ գործի քննության համար հինգ էին հանդիսացել ՀՀ նախագահի թեկնածուներ Լեւոն Տեր-Պետրոսյանի և Տիգրան Կարապետյանի դիմումները՝

փետրվարի 19-ին կայացած 33 նախագահի ընտրություններն անվավեր ճանաչելու եւ ԿԸՀ վերոհիշյալ որոշումը վիճարկելու վերաբերյալ:

**Շրագղանում հայտնաբերվել է զինք եւ զինամթերք**

ԵՐԵՎԱՆ, 19 ՄԱՐՏԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: 33 ազգային անվտանգության ծառայության (ԱԱԾ) աշխատակիցների իրականացրած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում Շրագղանում հայտնաբերվել է զենք-զինամթերք: 33 ԱԱԾ մամուլի կենտրոնի տարածած հաղորդագրությունում նշվել է, որ Երեւանում հրահրված զանգվածային անկարգությունների փաստի առնչությամբ հարուցված քեական գործի շրջանակներում կալանավորված, Շրագղան քաղաքի բնակիչ, 1974թ-ին ծնված Սոս Սուրենի Գեւորգյանին պատկանող տանը կից անասնագոմի տանիքում հայտնաբերվել են առգրավվել են 1 ինքնաշեն ատրճանակ, կարճեցված փողով 1 հրացան, 29 հատ որսորդական փամփուշտ, «Մագնիում» տեսակի ատրճանակի եւ «ՏՕ2» տեսակի հրացանի՝ ընդհանուր թվով 111 փամփուշտ, ինպես նաեւ 38 տրամաչափի 1 անձայն փամփուշտ, իսկ հողատարածքին կից անավարտ շինության նկուղում՝ որսորդական 1 հրացան՝ 15 փամփուշտերով, կանեփանման կանաչ զանգված՝ մեծ եւ փոքր պարկերի մեջ: Ս. Գեւորգյանը մարտի 12-ին կալանավորված, ԱԺ պատգամավոր Սասուն Միքայելյանի քրոջ որդին է: Առգրավվածն ուղարկվել է փորձաքննության:

**Ռ.Քոչարյան. «Եթե Ադրբեջանը շարունակի նույն գործելաձևը, Հայաստանի քայլը պետք է լինի Ղարաբաղի անկախության ճանաչումը եւ համապատասխան պայմանագրերի կնքումը»**

ԵՐԵՎԱՆ, 20 ՄԱՐՏԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Մինսկի խմբից ավելի լավ ձեւաչափ բանակցային գործընթացի համար մենք չունենք, բայց դա չի նշանակում, որ եթե Ադրբեջանն այդ ձեւաչափը չի ընդունում, մենք անպայման կառչելու ենք դրանից»,-ասաց 33 նախագահ Ռեբերտ Քոչարյանն այսօր հրավիրված ասուլիսում՝ լրագրողների խնդրանքով անդրադառնալով Ադրբեջանի կողմից ԵԱԿԿ Մինսկի խմբի ցրման գործընթաց սկսելու խնդրին:

«Չեն ուզում բանակցել, չբանակցենք: Մենք միշտ պատրաստ ենք եղել բանակցություններին եւ համարում ենք, որ դա խնդրի կարգավորման միակ ճանապարհն է: Չեն ուզում, խնդրեմ, բայց նաեւ պետք է մտածեն, որ եթե չեն բանակցում, ինչպիսի՞ն են տեսնում ապագան, եւ պատասխանատվությունը հնարավոր քայլերի համար ո՞վ է կրելու: Իմ տպավորությունը մի քիչ այլ է. Կոսովոյի անկախության ճանաչումն իրենց մոտ մտահոգության մեծ ալիք բարձրացրեց, եւ փորձում են ինչ-որ քայլեր ձեռնարկել հետագա նախաձեռնությունը վերցնելու ուղղությամբ եւ ինչ-որ տեղ հակակշռելու այդ նախադեպի հնարավոր կիրառումը», -պարզաբանեց Ռ.Քոչարյանը:

33 նախագահի դիտարկմամբ՝ Ղարաբաղը շատ ավելի մեծ եւ հիմնավոր իրավունքներ ունի անկախ լինելու, քան Կոսովոն. Լեռնային Ղարաբաղի անկախությունը հռչակվել է 1992թ-ի սեպտեմբերին, հանրաքվե իրականացվել է դեկտեմբերին, ԼՂՀ-ն ունի բոլոր պետական կառույցները եւ իր անկախությունն ու տարածքային ամբողջականությունը պաշտպանել է սեփական ուժերով:

**ԵՆԱՅԱԿ ՎԱՐԱԶՂԱՏ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ**

Մարտի 20-ին վախճանվել է ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր, 33 ԳԱԱ ակադեմիկոս, վաստակաշատ մանկավարժ Վարազդատ Չարությունյանը: Մեծ է նրա վաստակը ոչ միայն ճարտարապետության ոլորտում: Վարազդատ Չարությունյանը ավելի քան 50



տարի 3այաստանի պետական ճարտարապետական համալսարանի ճարտարապետության ամբիոնի վարիչն է եղել, շուրջ 12 տարի ղեկավարել է ճարտարապետների միությունը: Գիտնական-ճարտարապետը 3այրենիք-սփյուռք մշակութային կապերի նախագահության անդամ էր, Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի ընկերակցության, «Գիտելիք» ընկերության նախագահության անդամ: Վարազդատ Չարությունյանը մեծ ներդրում ունի նաեւ հուշարձանների պահպանության գործում՝ նախագահել է 3ուշարձանների պահպանության հայկական ընկերակցությունը: 1956 թվականից նա Մայր աթոռ Ս. Էջմիածնի ճարտարապետական հանձնաժողովի նախագահն էր: Շուրջ երեք տասնյակ շքանշանների ասպետ է, Երեւանի պատվավոր քաղաքացի:

Վարազդատ Չարությունյանը ծնվել էր Վանում 1909 թվականին եւ «Վասպուրական» հայրենակցական միության հիմնադիր նախագահն էր: Ի թիվս մի քանի հարյուր գիտական հոդվածների, 3 դասագիրք է հեղինակել եւ հրատարակել է շուրջ 40 գիրք, որոնց թվում է նաեւ իր հուշերի գիրքը:

3այաստանի 3անրապետության գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Վարազդատ Չարությունյանի մահվան կապակցությամբ 33 նախագահ Ռեբերտ Քոչարյանը ցավակցական հեռագիր է հղել 3արությունյանների ընտանիքին:

33 նորընտիր նախագահ, վարչապետ Սերժ Սարգսյանը ցավակցություն է հայտնել նշանավոր գիտնական, 33 ԳԱԱ ակադեմիկոս Վարազդատ Չարությունյանի մահվան կապակցությամբ:

**ՇՇ կառավարությունում քաղաքական չորս ուժեր ստորագրել են քաղաքական կոալիցիայի համաձայնագիր**

ԵՐԵՎԱՆ, 21 ՄԱՐՏԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: 33 կառավարությունում այսօր քաղաքական չորս ուժեր ստորագրել են քաղաքական կոալիցիայի համաձայնագիր: Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին 33 կառավարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, փաստաթուղթն ստորագրել են 3այաստանի 3անրապետական կուսակցության նախագահ Սերժ Սարգսյանը, «Բարգավաճ 3այաստան» կուսակցության նախագահ Գագիկ Ծառուկյանը, «Օրինաց երկիր» կուսակցության նախագահ Արթուր Բաղդասարյանը եւ 33Գ Գերագույն մարմնի ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանը:

**Միջապգային**

**Բուլղարիայի Ստառա Զագոռա քաղաքի Համայնքային խորհրդի կողմից Հայոց ցեղասպանության վերաբերյալ հատուկ որոշում է ընդունվել**

ԵՐԵՎԱՆ, 3 ՄԱՐՏԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Բուլղարիայի Ստառա Զագոռա քաղաքի 3ամայնքային խորհուրդը փետրվարի 28-ին 28 կողմ, 10 ձեռնպահ եւ 2 դեմ ձայների հարաբերակցությամբ հատուկ որոշում է ընդունել 3այոց ցեղասպանության վերաբերյալ: Այս մասին «Արմենպրես»-ին հայտնեցին ԱԳՆ մամուլի եւ տեղեկատվության վարչությունից:

**ՄԵԴԿԵԴԵՎԸ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԻ ՊՈՒՏԻՆԻ ԳԻԾԸ**

Ռուսաստանում նախագահական ընտրություններն ավարտվել են հենց առաջին փուլում. մարտի 2-ին համոզիչ հաղթանակ է տարել «Միասնական Ռուսաստան» կուսակցության թեկնածու, ներկայիս նախագահ Վլադիմիր Պուտինի հովանավորյալ Դմիտրի Մեդվեդեւը:



Ընտրական տեղամասերի 99,5 տոկոսի քվեների հաշվարկից հետո պարզվել է, որ Մեղվեդեւն ստացել է բոլոր քվեների 70,23 տոկոսը:

Կոմկուսի առաջնորդ Գեմնադի Զյուզանովն ստացել է 17,76 տոկոս, լիբերալ-դեմոկրատ Վլադիմիր Ժիրինովսկին՝ 9,37 տոկոսը: Ամբողջ երկրում քվեարկությանը մասնակցել է ձայնի իրավունք ունեցողների միջին հաշվով 69,65 տոկոսը:

## Հասարակական

### ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՆՊԱՏԱԿԸ «ՎԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի ՂԵՊԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆՆՈՒԹՅՈՒՆՆ Է»

Հայաստանի վերջին իրադարձությունների խոր վերլուծությունը դեռ առջևում է: Բայց, այդուհանդերձ, մենք իրավունք ունենք արդեն այժմ անելու որոշ հետետևություններ: Կուզենայի նախ եւ առաջ անդրադառնալ Հայաստանի նախագահության նախկին թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանի արած վերջնագրային հայտարարություններից մեկին: Այսպես, 2008-ի մարտի 5-ին Հայաստանի Սահմանադրական դատարանի նիստում նա պահանջեց կազմակերպել ոչ ավել ոչ պակաս «մարտի 1-ի դեպքերի միջազգային քննություն» [1]:

Պա ի՞նչ կարող է նշանակել: Մենք արդեն վարժվել ենք, որ Հայաստանի Հանրապետության առաջին նախագահը բավական թեթևորեն է օգտագործում տերմիններ ու հասկացություններ, որոնց իրավական բովանդակությունը չի բացահայտվում: Այնինչ որեւէ իրադարձության «միջազգային քննությունը» ունի միանգամայն կոնկրետ բովանդակություն եւ իրականացման հստակորեն կանոնակարգված արարողակարգեր:

Առաջին, դա նշանակում է, որ նմանօրինակ «միջազգային քննությունը» թույլատրող ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը պետք է ընդունի, որ խնդրո առարկա իրադարձությունը այս կամ այն պետության կողմից իր միջազգային պարտավորությունների խախտման օրինակ է, եւ որ նման խախտումը սպառնալիք է ստեղծում տարածաշրջանի եւ աշխարհի անվտանգության համար:

Երկրորդ, ՄԱԿ-ի հովանու ներքո պետք է ստեղծվի հատուկ միջազգային քննչական մարմին՝ հանձնաժողով, որն արտակարգ լիազորություններ կունենա ինքնիշխան պետությունում աշխատելու համար [2]:

Երրորդ, նման քննչական հանձնաժողովի գործունեությունը նախ եւ առաջ անսահմանափակ լիազորություններ է ենթադրում «մարտի 1-ի» գործի բոլոր նյութերի մանրակրկիտ հետազոտման համար, ներառյալ Հայաստանի քաղաքացիների, այդ թվում պաշտոնատար անձանց, ոստիկանության, Ազգային անվտանգության ծառայության եւ Հայաստանի զինված ուժերի սպաների, ինչպես նաեւ պետության բարձրագույն ղեկավարների հարցաքննությունները, որոնք չեն ունենա ցուցմունքներ տալուց հրաժարվելու իրավունք:

Չորրորդ, ինչպես ցույց է տալիս միջազգային հարուստ փորձը, բազմազգ քննչական խմբի պրոֆեսիոնալները (քննիչներ, դատախազներ, քրեագետներ, հատուկ ծառայությունների աշխատակիցներ, թարգմանիչներ եւ այլն), չնայած իրենց տրված մանդատին, առաջին հերթին ներկայացնում եւ պաշտպանում են իրենց պետության շահերը, այսինքն կատարում են իրենց քաղաքական պատվերը: Նման

հանձնաժողովները սկզբունքորեն հենց այդ նպատակով էլ ստեղծվում են, ըստ որում աշխատանքը, որպես կանոն, ձգձգվում է, քանի դեռ քաղաքական պատվերը չի կատարվել մինչեւ վերջ: Վերհիշենք, թե ինչպես 1991-1998 թթ. ՄԱԿ-ի հատուկ հանձնաժողովը՝ UNSCOM-ը զբաղվում էր մասնավորապես Իրաքում գոյություն չունեցող միջուկային զենքի մշտական որոնումներով եւ ինչպես դրա աշխատանքի ամբողջ գործընթացն օգտագործվեց ամեն տեսակ ճնշումներ բանեցնելու, նորանոր պատժամիջոցներ ձեռնարկելու եւ պահպանելու համար, որոնք սահմանափակեցին Իրաքի ինքնիշխանությունը եւ թուլացրին երկրի պետական մեքենան:

Իհարկե, Հայաստանի Հանրապետության առաջին նախագահը, առաջարկելով կազմակերպել «մարտի 1-ի դեպքերի միջազգային քննություն», կարող է եւ չիմանալ այդ տարրական ճշմարտությունները, որոնք միջազգայնագետ իրավաբանների եւ ազգային անվտանգության մասնագետների ուսումնասիրության առարկան են: Բայց այդ դեպքում մենք իրավունք ունենք եզրակացնելու, որ Լեւոն Տեր-Պետրոսյանը անբանիմաց եւ անգետ է այն հարցերում, որոնց վերաբերյալ իրեն թույլ է տալիս հրապարակավ արտահայտվել: Իսկ եթե նա գիտե, թե ինչի մասին է խոսքը եւ այդուհանդերձ շարունակում է պնդել իր առաջարկությունը, ապա հիմնավոր կասկածներ են ծագում անկախ Հայաստանի բուն գաղափարին նրա կողմնակցության առնչությամբ: Պարտադիր չէ ամենագետ լինել, որպեսզի պատկերացնենք հենց Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ նրա կողմնակիցների հակազդեցությունը մեր արած դատողություններին: «Իշխանությունները վախենում են միջազգային քննությունից, ինչն ապացուցում է ընդդիմության իրավացիությունը» եւ այլն: Բայց եկեք պարզենք ՀՀ առաջին նախագահի առաջարկության էությունը եւ իրականացման հնարավոր հետեւանքները:

Գաղտնիք չէ, որ միջազգային կազմակերպություններում, որոնց հովանու ներքո ստեղծվում են միջազգային քննչական հանձնաժողովներ, առաջին ջուրակի դեր են կատարում ԱՄՆ-ը եւ նրա դաշնակիցները: Եթե մի պահ պայմանակաճորեն պատկերացնենք, որ նման մարմին կստեղծվի Հայաստանի եւ ս. թ. մարտի 1-ի իրադարձությունների համար, ապա դժվար չէ կռահել, որ միջազգային քննչական խմբում կգերակշռեն հենց տարածաշրջանում իրենց առանձնահատուկ աշխարհաքաղաքական շահերն ունեցող Արեւմուտքի պետությունների ներկայացուցիչները: Քննչական խմբի անդամները Հայաստանի տարածքում իրավաբանական անձեռնմխելիություն կունենան ՄԱԿ-ի Արտոնությունների եւ անձեռնմխելիության կոմպենցիայի համաձայն: Միեւնույն ժամանակ նրանք ակտիվորեն կզբաղվեն լրտեսական գործունեությամբ, ինչպես դա տեղի ունեցավ եւ ընդունվեց, օրինակ, հենց UNSCOM-ի անդամների կողմից [3]:

Նման քննչական խմբերին տրամադրվող լիազորություններն առավել լրիվ պատկերացնելու համար մի քանի պարբերություն մեջբերենք ՄԱԿ-ի ԱՄ թիվ 1595 բանաձեւից, որը վերաբերում է 2005-ին Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի սպանության քննության գործում «Լիբանանի իշխանություններին օգնելու» նպատակով «ՄԱԿ-ի միջազգային անկախ քննչական հանձնաժողով» ստեղծելուն.

- ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը որոշում է, որ պարտականությունների արդյունավետ կատարումն ապահովելու համար հանձնաժողովը.

- կստանա Լիբանանի իշխանությունների լիակատար օժանդակությունը, ներառյալ նրանց այն բոլոր փաստաթղթերի,

վկայական եւ ֆիզիկական տվյալների ու ապացույցների տրամադրումը, որոնք հանձնաժողովը կհամարի քննությանն առնչվող,

- լիազորություններ կունենա հավաքելու ինչպես վավերագրական, այնպես էլ ֆիզիկական ամեն տեսակ լրացուցիչ տվյալներ եւ ապացույցներ՝ կապված այդ ահաբեկչության հետ, ինչպես նաեւ Լիբանանում գրույցներ անցկացնել բոլոր պաշտոնատար եւ մյուս անձանց հետ, որոնց հանձնաժողովը կհամարի քննությանն առնչվող,

- կունենա Լիբանանի ամբողջ տարածքում տեղաշարժելու ազատություն, ներառյալ այն բոլոր վայրերն ու օբյեկտները, որոնք հանձնաժողովը կհամարի քննությանն առնչվող,

- կստանա իր գործառույթների կատարման համար անհրաժեշտ ծառայություններ, հարկաբաժիններ, անձնակազմ եւ կայք, ինչպես նաեւ արտոնություններ եւ անձեռնմխելիություն, որոնց իրավունքն ունի ՄԱԿ-ի Արտոնությունների եւ անձեռնմխելիության կոնվենցիայի համաձայն: 2006-ի փետրվարին արդեն որոշում ընդունվեց Լիբանանի հարցով զբաղվող Չատուկ տրիբունալ ստեղծելու մասին, իսկ 2007-ի դեկտեմբերին Չասազան համաձայնվեց լինել Ռ. Չարիիի սպանության գործով դատավարության անցկացման վայր:

Իսկ հիմա խոսենք Տեր-Պետրոսյանի առաջարկության հնարավոր իրականացման անխուսափելի հետեւանքների մասին:

Նման մարմնի ստեղծման արդեն բուն գործընթացը՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի օրակարգում առաջարկությունը դնելը, այդ միջազգային համաժողովում Հայաստանի ներքին խնդրի քննարկումը, մանդատին առնչվող վեճերը եւ այլն, մեծագույն հարվածը կհասցնի Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությանն ու հեղինակությանը:

Հայաստանում նման խմբի աշխատանքի ընթացքը իր հերթին ավերիչ բնույթ կունենա Հայաստանի ազգային անվտանգության ամբողջ համակարգի համար, որը, ինչպես ցույց տվեցին վերջին իրադարձությունները, ունի լուրջ բացեր եւ դեռեւս իր կազմավորման փուլում է: Հայաստանի առաջին նախագահը փաստորեն առաջարկում է երկրի ինքնիշխանության կարելորագույն մասը՝ նրա արդարադատության համակարգը հանձնել միջազգային այն ուժերի անսահմանափակ վերահսկողությանը, որոնք բացարձակապես շահագրգռված չեն հայոց պետության ամրապնդմամբ: Եթե հաշվի առնենք նաեւ Հայաստանի դեմ ամեն պահի նոր ագրեսիայով հղի հայ-ադրբեջանական դիմակայության գործոնը, ապա նման միջազգային հանձնաժողովի ստեղծումից հետո հայոց անկախ պետականությունը, ինչպես ասում են, կերգի իր կարապի երգը: Նախկին նախագահը 2008-ի փետրվարի 22-ի հանրահավաքում իր ունկնդիրներին ըստ երեւույթին իզուր չէր ներշնչում, թե «ազատությունն արժեք է, որը բարձր է նույնիսկ անկախությունից, բարձր է նույնիսկ բոլոր հաղթանակներից, բարձր է նույնիսկ բուն պետականությունից: Պետությունը, անկախությունը, իշխանությունը, հաղթանակները որեւէ մեկին պետք չեն, եթե դրանք ազատություն չեն բերում մարդուն» [4]:

Լ. Տեր-Պետրոսյանի անարխիստական այս հայեցակարգը համեմատելով ազատագրված հայկական տարածքն Ադրբեջանին հանձնելու եւ պարտադիր կարգով այնտեղ միջազգային «խաղաղարարներ» մտցնելու նրա սեւեռուն գաղափարի հետ, Հայաստանի ներքին քաղաքականությանը լկտիորեն միջամտելու [5] Արեւմուտքին ուղղված համառ

կոչերի, ինչպես նաեւ «մարտի 1-ի դեպքերի միջազգային քննություն» անցկացնելու վերջին առաջարկության հետ, կարելի է վստահորեն եզրակացնել. Տեր-Պետրոսյանը Հայաստանում ներկայացնում եւ իրականացնում է համաշխարհային քաղաքականության որոշակի հեղինակների շահերը, որոնք ընդհանուր ոչինչ չունեն հայոց պետության եւ հայ ժողովրդի շահերի հետ: Ըստ երեւույթին, Տեր-Պետրոսյանի անխընտրական եւ հետընտրական ամբողջ ծրագրի մեխը հենց մարտի 5-ին նրա արած «դեպքերի միջազգային քննություն» անցկացնելու կոչն է, հանուն որի եւ հրահրվեցին ս. թ. մարտի 1-ի անկարգությունները:

Այդ վիրտուալ, բայց լավ ճանաչելի հեղինակների ծրագրերի իրականացումը մենք հստակորեն տեսնում ենք Իրաքում, որտեղ, բազմաթիվ վերլուծաբանների կարծիքով, պետականության կորստի եւ երկրի տրոհման խնդիրը լոկ ժամանակի հարց է: Անհրաժեշտ է նաեւ խոստովանել, որ Իրաքում տեղի ունեցող իրադարձությունները կանխորոշվել էին հենց վերոհիշյալ UNSCOM-ի հանձնաժողովի աշխատանքով: Բայց եթե Սադդամ Հուսեյնի վարչակարգն իրոք հանցավոր էր եւ արժանի էր միջազգային ընկերակցության դատապարտմանը, ապա մեր դեպքում խոսքը ՀՀ առաջին նախագահի նկրտումների եւ վնասարար գործունեության մասին է, որը փորձում է սեփական ձեռքերով նույնպիսի մահացու հարվածի տակ դնել վերստեղծված հայոց պետականությունը, որն իր գոյության նվազ քան 2 տասնամյակում հանուն գոյատեւման վերապրեց պատերազմ եւ տնտեսական շրջափակում, ենթակա դարձավ անչափ ուժեղ տեղեկատվական-հոգեբանական գրոհների եւ ադրբեջանաթուրքական նոր ներխուժման սպառնալիքի: Ի դեպ, իր նախագահության ժամանակաշրջանում նախկին նախագահը երբեք չի բարձրացրել, օրինակ, Սունգայիթում, Բաքվում, Կիրովաբադում, Գետաշենում, Մարաղայում եւ հայաբնակ մյուս վայրերում Ադրբեջանի իշխանությունների կազմակերպած հայկական ջարդերի կապակցությամբ «միջազգային քննություն» անցկացնելու հարցը:

Վերելում մշված փաստերը լոկ որոշ հնարավոր հետեւանքներն են մարտի 1-ի դեպքերի «միջազգային քննություն» անցկացնելու Տեր-Պետրոսյանի պահանջի, հետեւանքներ, որոնք, վստահ են, երբեք չեն իրականանա Հայաստանում. հայ ժողովուրդը դա թույլ չի տա:

Միեւնույն ժամանակ Հայաստանի իշխանությունները պետք է խոստովանեն, որ շատ ուրիշ սխալներից բացի (սոցիալական եւ կադրային քաղաքականություն, հասարակության ձայնին անսալու անկարողություն եւ այլն), իրենք թույլ են տվել նաեւ ռազմավարական սխալ, այն է՝ իրենք թողտվությամբ (երբեմն էլ հովանավորությամբ) Հայաստանում դրսի աջակցությամբ արմատավորվել եւ ինքնակազմակերպվել է հզոր «հինգերորդ շարասյուն»՝ Տեր-Պետրոսյանի եւ ՀՀԾԻ-ի գլխավորությամբ: Այդ հիվանդությունն առանց ցավի բուժելն, ավա՞ղ, այլեւս անհնար է. ժամանակը բաց է թողնված [5]: Բայց այնուամենայնիվ հարկ կլինի հեռացնել «փչացած ատամը»:

**ԱՐՄԵՆ ԱՅՎԱԶՅԱՆ, Քաղաքագիտության դոկտոր, ռազմավարական հետազոտությունների «Արարատ» կենտրոնի տնօրեն, www.hayq.org**

1. «Տեր-Պետրոսյան. Սերժ Սարգսյանը չէր կարող նախագահ առաջադրվել, լինելով վարչապետ», [www.regnum.ru/news/967349.html](http://www.regnum.ru/news/967349.html), 13.13 05.03.2008

2. ԵՄՁ, ԵԱԳԿ-ն, միջազգային մյուս կառավարական կազմակերպությունները չունեն նման փորձ եւ մեխանիզմներ

3. Washington Post եւ Boston Globe թերթերը, անանուն աղբյուրներ վկայակոչելով, հաղորդել են, որ UNSCOM-ի ղեկավար Ռիչարդ Բաթլերը իմացել է ԿՊԿ-ի հետ համագործակցել է մասնավորապես Իրաքի ռազմական հաղորդակցությունների էլեկտրոնային լրտեսման նպատակով: Այդ տեղեկությունը 2005-ի փետրվարին հաստատեց UNSCOM-ի անդամ Ռոդ Բարթոնը Ավստրալիայի հեռուստատեսությամբ ունեցած իր ելույթում: Հավաքված տեղեկություններն օգտագործվել են Իրաքին ուղղորդված ճշգրիտ ռմբահարվածներ հասցնելու համար:

4. Մեքսերվում են «Ազատությունը բարձր է նույնիսկ... հրեշավոր գաղափարախոսության հետեւանքները» հոդվածից, «Հայոց աշխարհ», 4 մարտի 2008

5. Levon Ter-Petrosian, «Silence of Armenia», Washington Post, March 5 2008

6. Տես, օրինակ, Ա. Այվազյան, «Հայության քաղաքական գիտակցության ռազմավարական կորուստները կամ Հայաստանի աշխարհաքաղաքական կեցության արսիոմաները», «ԲՏՍԸ ԸՐՎԱՎՈՒ», 9 հոկտեմբերի 2007:

[http://www.golos.am/index.php?option=com\\_content&task=view&id=15221](http://www.golos.am/index.php?option=com_content&task=view&id=15221)

### 350 ՀԱՉԱՐ՝ «ԶԱՆԴԵԼՈՒ» ԸՆՏՐԱՀԱՎԱՔԻՆ Ի՞նչը միավորեց այդքան մարդկանց փետրվարի 19-ին

Նախագահական ընտրությունների արդյունքները եւ հաջորդող իրադարձությունները դեռ երկար ժամանակ կքննարկվեն: Թե ինչո՞ւ զարգացումները գնացին այդ ուղղությամբ, ինչո՞ւ տեղի ունեցավ այն, ինչը թվում էր, թե Հայաստանում չէր կարող տեղի ունենալ, եւ բազմաթիվ այլ ինչուների պատասխանները դեռ պետք է տրվեն: Սակայն այսօր արդեն տեղի ունեցածի որոշ պատճառներ կարելի է տեսնել: Ընդ որում, դրանք շատ ավելի խորքային են, քան ներկայումս շրջանառվող սոցիալական, գործող իշխանություններից դժգոհ լինելու, հոգեբանական դիվերսիայի ենթարկվելու եւ այլ պատճառները, որոնք թեւեւ նույնպես առկա են, բայց հիմնականները չեն:



Այն, որ 2008-ի փետրվարի 19-ին ընտրողների ձայները բաշխվեցին նախագահի 4 հիմնական թեկնածուների միջեւ, տարօրինակ կամ արտառոց համարել չի կարելի: Տարօրինակ չէր նաեւ, որ 270 հազար մարդ իր ձայնը տվեց ժողովրդին պոպուլիստական խոստումներով իր կողմը գրավող ընդդիմադիր թեկնածու Արթուր Բաղդասարյանին, 100 հազարը՝ իշխանության մաս կազմող, բայց նույն իշխանության հանդեպ քննադատական կեցվածք ընդունած ԶՅԴ թեկնածու Վահան Դովհանմիսյանին եւ վերջապես 862 հազարը՝ իշխանական թեկնածու Սերժ Սարգսյանին: Տարօրինակ էր, որ քաղաքական համակարգը փոփոխելու լոզունգով հանդես եկող Վազգեն Մանուկյանը ստացավ միայն 21 հազար ձայն: Առավել արտառոց էր նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի ստացած 21 տոկոս կամ ավելի քան 350 հազար ձայները:

Բազմիցս է ասվել, թե ովքեր են նախկին նախագահին ձայն տվել՝ նրա թիմակիցները եւ համախոհները, որոնք եղել են իշխանության ղեկին, քաղաքական որոշ ուժեր, որոնք սպասելիքներ ունեին նախկին նախագահի իշխանության գալու դեպքում, տարբեր տրամաչափի նախկին պաշտոնյաներ, որոնք այս իշխանությունների ժամանակ գրկվել էին պաշտոններից, սոցիալապես վատ վիճակում գտնվող մարդիկ, որոնք հոգնել են վատ ապրելուց, բայց մոռացել են, թե ում իշխանության տարիներից են սկսել վատ ապրել, նաեւ փոքր ու միջին բիզնեսով զբաղվող մարդիկ, որոնք չնայած կայացել են վերջին 5-6 տարիներին, բայց օբյեկտիվ եւ սուբյեկտիվ դժգոհություններ ունեն կապված հարկային եւ պետական այլ կառույցների հետ, եւ մարդիկ, որոնք անկախ սոցիալական կամ այլ կացությունից, պարզապես դժգոհ են իշխանություններից: Սակայն չի կարելի չնկատել նրանց միավորող մեկ ընդհանրություն: Նրանք բոլորը ձայն էին տվել մի անձի, որը խոստանում էր քանդել, ոչնչացնել, նստեցնել, որը երկրի հետագա զարգացման իր պատկերացումների մասին ոչինչ չէր ասում: Սակայն քանդելու եւ ոչնչացնելու խոստումը բավարար եղավ, որպեսզի նա իր շուրջը հավաքի նման պատկառելի ընտրազանգված: Ի՞նչ է սա նշանակում:

Դժբախտաբար, մեր ժողովրդի մի զգալի հատվածի մեջ շարունակում է ապրել «քանդելու» եւ «ոչնչացնելու» մտայնությունը եւ դրանով կողմնորոշվելը: Սա միայն սոցիալական վիճակով չի կարելի բացատրել, քանզի սոցիալապես վատ վիճակում գտնվողներն ամենեւին էլ միաձայնորեն Լեւոն Տեր-Պետրոսյանին չընտրեցին: Մյուս թեկնածուները եւ հատկապես սոցիալական կյանքի անմիջական բարելավումներ խոստացող Արթուր Բաղդասարյանն ու թոշակների կամ աշխատավարձերի բարձրացում իրականացրած Սերժ Սարգսյանը նույնպես ստացան նույն խավի ձայները: Սակայն այդ ընտրողները տարբերվում են նախկին նախագահին ընտրողներից, որովհետեւ իրենց վիճակից դուրս գալու ելքը տեսնում են ոչ թե ինչ-որ բան քանդելու կամ ինչ-որ մեկին ոչնչացնելու կամ, ծայրահեղ դեպքում, հեռացնելու, այլ կայունության, զարգացման, կառուցելու մեջ:

Չեղբնորակա շրջանի իրադարձությունները եւ հատկապես մարտի 1-2-ի դեպքերը փաստացի ապացույց էին, որ նախկին նախագահին ընտրել էին «քանդելու» ու «ոչնչացնելու» որպես խնդիրների լուծման տարբերակ տեսնողները: Նրանք, որպես կանոն, չեն էլ պատկերացնում եւ չեն ցանկանում մտածել, թե ի՞նչ է լինելու, եթե իրենց թեկնածուի հաղթանակից հետո հաջողվի «քանդել» ու «ոչնչացնել», ի՞նչ են ստանալու իրենք: Մինչդեռ պատմությունից հայտնի է, որ գալու է խոր հիասթափության պահը, որ մի քանի տարի հետո արդեն այդ նույն մարդիկ եւ նրանց ավելացած բազում ուրիշներն են հրապարակներ ու փողոցներ դուրս գալու «քանդելու», «ոչնչացնելու», «նստեցնելու» հերթական կոչ անողների հետեւից գնալու համար: Իսկ որ դա վաղ թե ուշ անխուսափելիորեն բերելու է պետականության կորստի, միանշանակ է: Հարց է առաջանում, որտեղից է գալիս «քանդելու» սեւեռուն գաղափար հիշեցնող թաքցված կամ անթաքույց մոլուցքը եւ ինչպե՞ս կարելի է դրա դեմ պայքարել:

Գլխավոր պատճառը դարեր շարունակ պետականության բացակայությունն է: Եթե, օրինակ, Ռուսաստանում իրենց պաշտոնավարման ավարտից 10 տարի հետո փորձեին նախագահ ընտրվել, ենթադրեմք Միխայիլ Գորբաչովը կամ Բորիս Ելցինը, որոնք նույն պետությունը քանդողի համարումն ունեն Ռուսաստանում, ինչպես Լեւոն Տեր-Պետրոսյանը Հայաստանում, եւ եթե նրանք խոստանային քանդել Վլադիմիր Պուտինի «ստեղծած ավազակապետությունը»,

պատկերացնում էք, թե ինչ արձագանք կստանային ռուսական հասարակության կողմից: Ոչ թե 21 տոկոս, նրանցից եւ ոչ մեկը 1-2 տոկոսից ավելի ծայր չէր հավաքի, քանզի, ի տարբերություն մեզ՝ հայերիս, ռուսները պետություն են ունեցել դարեր շարունակ եւ ոչ միայն պետություն, այլեւ կայսրություն, որը նրանց ազգային հպարտության գլխավոր բաղադրիչներից է: Եվ ամեն մեկը, ով կփորձի ձեռք բարձրացնել այդ պետականության վրա, կարժանանա Ռուսաստանի բնակչության ընդգծված բացասական եւ անհանդուրժող վերաբերմունքին: Ավաղ, հաճախ ավելորդ ինքնագովություններ տառապող հայերս, գոնե մեր մի հատվածը դեռ շատ հեռու է մնան գիտակցություն ունենալուց: Թեեւ պետք է նշել, որ այն սկսել է ձեւավորվել: Դրա ապացույցն է այն, որ հազարավոր ընտրողներ, անձնական համակրանք չունենալով Սերժ Սարգսյանի հանդեպ, չընդունելով նրա քաղաքական հայացքներն ու սկզբունքները, ընտրեցին նրան՝ հանուն երկրի կայունության եւ պետականության պահպանման, հնարավորություն չտալով Լեւոն Տեր-Պետրոսյանին իրականացնելու պետականության հիմքերը քանդելու ծրագրերը: Այսինքն, կարող ենք փաստել, որ մեր բնակչության գերակշիռ մասը, այդ թվում նաեւ մյուս թեկնածուներին ընտրողները, չեն աջակցում «քանդելու» կոչով հանդես եկողներին: Մնում է միայն տարեց տարի ավելացնել կառուցման կողմնակիցների թիվը, որոնք նկատի ունենալով այս կամ այն թեկնածուի, քաղաքական ուժի անցած ուղին, իրենց եւ երկրի ապագան կտեսնեն նրանց քաղաքական ծրագրերի եւ գործողությունների մեջ:

Սարսափելի չէ եւ ավելին՝ բնականոն է, որ գործող իշխանությունները ներկայացնող Սերժ Սարգսյանին դեմ է արտահայտվել մոտ 750 հազար մարդ: Սարսափելին այն է, որ դրանցից 350 հազարը իր ձայնը տվել է «քանդող» ուժին՝ Լեւոն Տեր-Պետրոսյանին, այլ ոչ թե, ասենք, «վերափոխող» կամ «բարեփոխող» Վազգեն Մանուկյանին կամ Վահան Յովհաննիսյանին: Մինչդեռ եթե այդ 350 հազար կամ թեկուզ դրանից ավելի ձայները ստանային վերջիններս կամ նրանցից որեւէ մեկը, դա, թերեւս, ավելի զգոն կդարձներ ընտրված նախագահին, որն իր թիկունքում կզգար կառուցողական քաղաքական ուժի շնչառությունը, եւ պետականությանը սպառնացող վտանգի դեմ հավելյալ ջանքեր պահանջող պայքարի փոխարեն, իր քաղաքական վարկանիշը պահպանելու համար ավելի նպատակասլաց կգործեր այդ նույն պետության զարգացման ծրագրերի իրագործման ուղղությամբ: Սակայն, ցավոք, 2008-ի նախագահական ընտրությունները փաստեցին, որ դեռ ճանապարհ ունենք անցնելու:

*ՄԱՐՏԻՆՈՍՅԱՆ*

## Մշակույթ

### Փետրոնական Իրանի գավառների վիճակագրույց «Շահ Աբբաս մեծի 1603-1605-թթ. Շայաստանից գերեվարված հայերը»

Փերեցիները բերված են Բեգաթլու գավառից, Չհարմահալցիները Բասենի գավառից, Բուրվարցիները Տուրուբերան գավառից: Սպահանի նահանգի հայաբնակ գավառներն են եղել Ալընջան, Լնջան, Չարմահալը եւ Քեարվանդը: Ալընջանի եւ Լնջանի հայերը հեռացել են 1795-1890թթ., իսկ Չհարմահալը 1946թ. ուներ ինը գյուղ, որոնցից վեց գյուղերը՝ 1144 շունչ

բնակիչներով ներգաղթեցին Չայաստան, իսկ մյուս երեք գյուղերի հայերը փոխադրվել են Թեհրան եւ Աբադան:

Ալընջան գավառն ունեցել է յոթ գյուղ՝ Բոնդարգ, Ջագուռն, Մեմեդ, Մշաղբյուր, Փիղան, Քարուջ եւ Քափշան:

Լնջանը ունեցել է 11 հայաբնակ գյուղեր, որոնց բնակիչները 1790-1840թ. գաղթել են հայրենիք կամ տեղափոխվել են ուրիշ գավառներ: Չայաբնակ գյուղերն են եղել Բուրուզարդը, Ջուղունը, Խունսարաքը, Միդգյուն, Ջուզունը, Սեմսոնը, Փարթունը, Փելարդը, Քեալենարմանին, Քարթեն, Քիլիսուն եւ Վարդանը:

Քեարվանդ գավառը ունեցել է յոթ գյուղեր՝ Ավար, Դովլաթաբադը, Իշկիրան, Յովչունը, Մադարշահը, Ներքին քրդերը, Վերին քրդերը: 1780-ական թվականից հետո հինգ գյուղերի բնակիչները փոխադրվել են Փերիա եւ Բուրվարի, իսկ երկու գյուղերի՝ Դովլաթաբադի եւ Վերին քրդերի բնակիչները 1946 թվականին ներգաղթել են Չայաստան:

Քեարվանդը գտնվում է Սպահանից 90 կիլոմետր հեռավորության վրա՝ դեպի արևմուտք:

Քեամարա գավառում 1970 թվականից հետո միայն 4 հայ ընտանիք է եղել:

1940թ. վիճակագրության համաձայն Փերիայի հայաբնակ 25 գյուղերի բնակչությունը եղել է 16107 շունչ:

1970թ. Ջափլաղ գավառում եղել է միայն 4 հայ ընտանիք: Այժմ Դարաղանում քիչ թվով հայեր կան: Այս գավառի հայերը 1946 թ. ներգաղթել են հայրենիք:

Չամադանի Շավարին գյուղում 1903 թ. եղել է 135 տուն հայ՝ ընդամենը 720 շունչ, որոնք 1946 թվականին ներգաղթել են հայրենիք:

*Արամիկ Ջարեհն*

## Մարդակալան

### Ծանոթանա՞ք Թոմիկ Դավթյանի հետ

*Իրանի կրտսեր Ֆուտբոլիստների հավաքականում 12 տարեկանից ընտրված եւ ՀՄՄ «Րաֆֆի»*

*Համալիրի լավագույն մարզիկ*

Թոմիկ Դավթյանը ծնվել է 1997 թ. Թեհրանում, դպրոցական շրջանից սեր ու համակրանք է ունեցել ֆուտբոլի նկատմամբ, որի համար երախտապարտ է իր առաջին մարզիչին՝ պրն. Ռաֆիկ Աղաջանյանին: Թոմիկը իր մարզական սերը հագեցնելու համար, անդամակցել է ՀՄՄ «Րաֆֆի» Չամալիրի ֆուտբոլի հավաքականին, որի մարզիչն էր պրն. Անդրանիկ Դուրջյանը եւ խմբի պատասխանատուն էր պրն Ժիրայր Բաբախանյանը: Այնուհետև ընտրվում է Իրանի 12 տարեկանից ցածր հավաքականի կազմում: Նրա սիրած թիմը «Ռեալ Մադրիդն» է եւ սիրում է Ռոբերթո Քրուսին:

Թոմիկը պատմում է նաև իր մարզական հուշերից, որում ամենատպալոկիչը եղել է Շիրազի թիմի հետ մրցությունը, որի ընթացքում նա 3 գոլ է խփել եւ խաղն ավարտվել է հավասար արդյունքով:

Թոմիկը հարցազրույցի ավարտին՝ նախ փառք է տալիս Աստծուն՝ իր հաջողության համար, հետո՝ խորին շնորհակալությունն է հայտնում իր ծնողներին, որոնք ամեն պահ իր կողքին են եղել եւ, ինչու չէ, նաև իր մարզիչին՝ պրն. Անդրանիկ Դուրջյանին, որին պարտական է իր բոլոր հաջողությունների համար: Վերջում իր համատարիքներին կոչ է անում որ միշտ զբաղվեն մարզանքով, որպեսզի հեռու մնան փորձանքներից:

Մենք էլ «Լույս» ամսագրի կողմից շնորհավորում ենք Թոմիկ Դավթյանին եւ ցանկանում ենք նրան փայլուն ապագա:

*Նարինե Նաջարյան*